INTAS-ը մրցակցում է ԱՄՆ-ի հետ

*Հայաստանի գիտությունը պահող գրանտատու կազմակերպություններից մեկի՝ INTAS-ի պաշտոնական ներկայացուցիչ **Ֆեդերիկո Ֆերինին** հուլիսի 3-ից գտնվում է Երեւանում եւ երեկ ԳԱԱ-ի դահլիճում հանդիպեց հայ գիտնականների հետ:*

Պարոն Ֆերինին նրանց ներկայացրեց իրենց կազմակերպության աշխատանքի սկզբունքները եւ 2001թ. ծրագրերը, որոնց մրցույթին կարող են մասնակցել հայ գիտնականներն ու դրամաշնորհ ստանալ: Սակայն այս հնարավորությունը ոնց որ թե մեր գիտնականներին առանձնապես չէր ոգեւորել, քանի որ այնքան էլ շատ մարդ չկար: Կարելի է նաեւ ենթադրել, որ հայ գիտնականները այնքան տեղեկացված են այս կազմակերպության մասին (INTAS-ի ինտերնետային էջից կամ Երեւանյան խորհրդատվական գրասենյակից), որ այդ ծրագրերի ներկայացումը, ընդ որում՝ շատ վատ թարգմանությամբ մատուցված, նրանց համար հետաքրքիր չէր: Սակայն ԳԱԱ փոխնախագահ Վլադիմիր Բարխուդարյանը եւս հանդիպման վերջում փաստեց, որ հայ գիտնականները, ի տարբերություն, ասենք՝ վրացիների, շատ պասիվ են գրանտային ծրագրերին մասնակցելու հարցում՝ չնայած պետությունն այսօր գիտությունը պահելու համար միջոցներ չունի եւ հույսները հենց այդ գրանտատու կազմակերպություններն են: Սակայն, ինչպես կարելի է ենթադրել նաեւ գիտնականների արձագանքից, INTAS-ի նկատմամբ պակաս հետաքրքրությունը կարելի է բացատրել նաեւ վերջինիս պահանջների խստությամբ ու ոչ այնքան բարենպաստ պայմանների առկայությամբ, ինչի պատճառով մյուս, հատկապես ամերիկյան կազմակերպությունները շատ ավելի գայթակղիչ են գիտնականների համար: INTAS-ը, որի կենտրոնական գրասենյակը Բրյուսելում է, միջազգային միություն է, որի անդամները եվրոպական զարգացած երկրներ են, ինչպես նաեւ Եվրամիությունը՝ որպես առանձին միավոր: Այն իր առաքելությունն է համարում աջակցել ԱՊՀ երկրներում գիտության զարգացմանը եւ ԱՊՀ ու եվրոպական երկրների գիտնականների համագործակցությանը: Դրամաշնորհի համար հայտ պետք է ներկայացնեն խմբով, ընդ որում՝ խմբի անդամները ցանկալի է լինեն տարբեր երկրներից, ինչը հաճախ այնքան էլ հեշտ չէ ապահովել: Լրագրողների հետ առանձնազրույցում «Նոյյան տապանի» թղթակցի հարցին՝ կա՞ մրցակցություն INTAS-ի եւ մյուս, հատկապես ԱՄՆ-ի կողմից ֆինանսավորվող գրանտատու կազմակերպությունների միջեւ, Ֆեդերիկո Ֆերինին բացասական պատասխան տվեց: Սակայն հարեւանությամբ կանգնած Վլ. Բարխուդարյանը ցածրաձայն նկատեց՝ *«Կա՛, կա՛ մրցակցություն»:* Իսկ Ֆ. Ֆերինիի՝ INTAS-ը օգնում է հայ գիտնականներին, քանի որ Եվրոպայի համար շատ կարեւոր է, որ պահպանվի ԱՊՀ երկրների գիտական համակարգը՝ որպես զարգացման, խաղաղության երաշխիք: INTAS-ի ներկայացուցիչն, այնուամենայնիվ, հետո ընդունեց, որ մրցակցություն կարող է լինել ԱՄՆ-ի համեմատ ավելի շատ գիտնականներ ԱՊՀ երկրներից ներգրավելու հարցում ու զարմանալի է համարում, որ ինչո՞ւ են եվրասիական երկրների գիտնականները աշխատում ոչ թե Եվրոպայի համար, այլ՝ մյուս մայրցամաքների: INTAS-ը իր գործունեությունը Հայաստանում սկսել է 1992 թվից եւ մինչ օրս հատկացրել է 2.257.675 եվրոյի դրամաշնորհ՝ 115 տարբեր ծրագրերի համար: INTAS-ին առավել հետաքրքրում է ֆիզիկայի ոլորտը՝ թեեւ Ֆ. Ֆերինիի հավաստմամբ, իրենք ֆինանսավորում են գիտության բոլոր ոլորտներին առնչվող ծրագրերը: Յուրաքանչյուր տարվա մրցույթային ծրագրերը որոշակի թեմայով են լինում: Այս տարվա թեման շրջապատի աղտոտվածության խնդիրն է, որի լուծման առաջարկով կարող են հանդես գալ տարբեր ոլորտների գիտնականներ: Բացի թեմատիկ մրցույթներից, կան նաեւ բաց մրցույթներ, որոնց կարող են մասնակցել բոլոր բնագավառների գիտնականները եւ ցանկացած թեմայով: Նույն գիտնականը կարող է մի քանի ծրագրերի հայտ ներկայացնել, բայց եթե բոլորի համար էլ դրամաշնորհ շահի, կվարձատրվի միայն մեկ դրամաշնորհի համար նախատեսված հոնորարի չափով: Բացի այդ, գրանտների չափը գրեթե նույնն է եւ հաշվի չեն առնված գիտության տարբեր ոլորտների առանձնահատկությունները, առավել կամ պակաս ծախսատար լինելը: Հասկանալի է, որ սրանք այնքան էլ գայթակղիչ պայմաններ չեն:

Ֆեդերիկո Ֆերինին, ի պատասխան լրագրողի հարցին, տեղեկացրեց, որ գիտական աշխատանքների հեղինակային իրավունքը պատկանում է միայն գիտնականներին: Նա վստահեցրեց, որ INTAS-ը բացարձակ ոչ մի հավակնություն այս հարցում չունի:



ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ